



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

7-19

W. H. & A. S. CO.
NEW YORK
1880

11
11

11

11

01 JAN 2009

19 NOV 2011

Հրատարակութիւն Լեոն Սարիբեգեանի

№ 9195.

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԸՍԱՆԵԱՆ

891.99

F-19 *uy*

ՊՍԻԿ ՄՀԵՐ

(Գիւցագներգական պատմական պօէմ)

«Սասմայ ծոերի յուշիկներից»:



1904

Տպարան Ն. Պ. Գուրսկի

1001
4611

27.02.2013

23169

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ղ Ի Ն .

Վարդալով „Մշակում“ և „Տարազում“
յայտարարած Պ. Գրիգոր Բալասան-
եանի առաջարկութիւնը իր երկասիրու-
թիւնները հրատարակելու մասին, եւ սի-
րով յանձն առայ, և ահա՛ իմ հրատա-
րակութեամբ մինը միւսի յեակեց լոյս
են տեսնելու Բաթում Գուրսի տպա-
րանում գրաքննարանից թոյլատրուած
հետեւեալ պօէմները „Պատիկ Մհեր“,
„Որբիկների արցունքները“, „Երկու Պահ-
լաւան“ (Սասունի հիմնադիրները) և
„Սասունցի Դաւիթ“ (երկու հատոր)
առանձին գրքերով, որոնք կազմում են
մեր «Շահ նէմէները» ծառայող զնահա-
տելի նիւթ բուն ժողովրդական „Սաս-
մայ Ծռերից“ առնուած:

Յանկալի կը լինէր ուրիշ գրականասեր
մարդիկ էլ, սոյն օրինակին հետեւելով,
հրատարակելու խնամք տանէին մեր
զիւցագներգու բանաստեղծի մի շարք
աշխատութիւններն էլ ճանապարհորդա-
կան, կենսագրական ու քննադատական,

Дозволено цензурою 11 августа 1904 г. Тифлисъ.

մի գեղեցիկ միջոց և պարտականու-
թիւն, որով բարոյապէս թէ բանաւ
ստեղծին օգնելու և թէ առանց այն
էլ մեր աղքատիկ գրականութիւնը հա-
րստացնելու:

Իսկ մեր բարեկամներին խնդրում ենք
տարածել գրքերը իրանց ծանօթ շրջան-
ներում:


Բաթում

Լևոն Սարիբեկեան

ՊՍՏԻԿ ՄՇԵՐ

(Գիւյսազներգական սրտմական սօսէմ)

I

 Ի եռ Կապուտ կողում եղած ժամանակ
Խաթունը ծնեց մի արու գաւակ.
Մարդը տանը չէր: Երբ իմաց արին,
Եկաւ և աչքը ի՞նչ տեսնի բարին.
Մի սիրուն տրդայ շարմաղ երեսով,
Հըրհըրատելիս արևի լուսով:
Բայց չէր էլ ուզում Դաւիթ հաւատալ,
Թէ կարէ այդպէս բաղդի տիւրանալ.
Ասաց խնդացած. «վերցրո՛ւ, Խաթուն ջան,
Ոսկի թանկագին այս ապարանջան
Կապիր աջ թեին, որպէս մի նշան.
Եթէ այդ տղան իմն է իսկական՝
Պէտքէ ունենայ յաղթողի հրնար,
Պահաւանական գորութիւն, հունար».
Ասաց ու գնաց: Տրդային բերին
Բագմութեան տուաջ խան ձարուր գրբին
Եւ փաթաթեցին կապերի տեղակ
Դո՛ւթանի ճոպան չղթայով երկտակ.
Տրդան ճնշումից բոււմ է լացում.
Եւ երբ ձրգձրգուեց նեղ օրօրոցում

Կտրտեց ամուր կապերն ու շղթան:
 Իռկոյն հօր Դաւթին գնաց պատասխան,
 «Թէ տղան լաւ է, շղթան կտրտեց,
 Մի գարմանալի՜ հունար ցոյց տուեց,
 Միայն մի ձեռքը խուլի է մնացել,
 Ձեն կարողանում մի կերպով բացել»:
 Դաւիթը եկաւ, մանկան մօտ նստեց.
 Ձեռքը ձեռքի մէջ նա այնքան մաժեց՝
 Մինչև որ բացուեց: Տեսաւ արեան նիշ.
 «Հայ, հայ, հայ. ասաց Դաւիթն տկնապիշ,
 Աշխարհ մի կաթիլ արիւն է արել,
 Մենակ իր ձեռքի բռնան մէջ դրել.
 Եթէ ողջ մնայ, հասակը առնի,
 Հատ հըրաշք բաներ նրանից կըլինի»:
 Ապա հանդիսով բերին կնքեցին,
 Անունը Պրօտիկ Մըհերը դրեցին:

* * *

Դաւիթ Կապուտկող թողեց պապի մօտ
 Պստիկ Մըհերին և մի առաւօտ
 Կին ու բարխանով ընկաւ ճանապարհ
 Դեպի Սասունը—հայրենի աշխարհ:

II



ժամանակ անցաւ.
 Տղան մեծացաւ,
 Ուրիշը տարով,

Նա ժամով, օրով:
 Երբ վեց տարեկան՝
 Տեսքով դուրեկան
 Ձի հեծեց մի օր,
 Ինչպէս թագաւոր,
 Դուրս եկաւ տանից նա զբօսնելու,
 Աշխարհի բաներ աչքով տեսնելու:
 Յանկարծ նկատեց տեղից հեռաւոր
 Իրեն է գալիս մի մեծ ձիաւոր,
 Մի սիրուն աղջիկ առած գաւակին.
 Մըհերը բարձրաձայն կանչեց ծերուկին.
 — «Է՛յ ծերունի՛, ո՞ւր ես գնում.
 Ո՞ւր աղջիկն է, ո՞ւր ես տանում»:
 — «Սա է աղջիկը Ադրբէջանի, *)
 Զարմով թագաւոր մի պահլաւանի.
 Սրբի անցկացրի մեծ ու պըստկին,
 Սրան փախցրրի ձիուս գաւակին»:
 Մըհերը գոռաց — «Ինչ ոյժի տէր ես,
 Քանի գլխանի, որ աղջիկ փախցնես»:

III



Դաւիթը, որ վախը չըզտէր սրտին
 Եւ տէր էր կարծում ամբողջ աշխարհին,
 Յանկարծ գողգողաց,
 Վախեց ու ասաց.

*) Ատրպատական Պարսկաստանում.

«Չատ եմ շրջել ծովեր, գետեր,
 «Բայց չեն թրջուել ձիուս ոտեր,
 «Չատ ման եկել ժայռեր, սարեր,
 «Չեն գուրս եկել դէմրս քաջեր.
 «Այսօր փոքրիկ տղայ տեսել,
 «Սիրտս հեռուից վախ զգացել,
 «Սարեր, ձորեր, ինձ օգնեցէք,
 «Այս տղայից ինձ փրկեցէք...»

IV



Սասց, բայց և նա առաջ քրչեց ձին.

Երկուսն էլ իրար դէմ յարձակուեցին,

Իրար զբռնեցին ամուր ձեռքերով,

Կռիւն սկսուեց դիմադիր ուժով:

Փոշեղէն ամպեր վեր են բարձրանում:

Եւ արեգակի երեսը բռնում...

Դաւթի թաշկինակ յանկարծ վայր ընկաւ,

Մի քամի նրան առաւ ու աարաւ

Խանդուղ-Խանումի դռանը վէր զցեց.

Նա էլ դուրս եկաւ և ինչ նկատեց,

Արար աշխարհը բռնել է փոշի,

Լմպերի նման ելնում գոլորշի

Եւ հեռու դաշտի տարածութիւններ

Դրմբղրմբումեն գոռ կռուի թնդիւններ.

Յած նայեց, տեսաւ, իսկոյն ճանաչեց,

Վերցրեց թաշկինակ, մի խոր հառաչեց...

Ձին հեծաւ

Գնաց տեսաւ

Փոշին աւելի վեր է բարձրանում,
 Դաշտը դղրդում, գետին տատանում,
 Աղաղակների ահուելի ձայներ
 Գնդընգացնում են երկնի կաճարներ:
 Դաւիթ և Մհեր, սաստիկ կատաղած,
 Քափ ու քրտնքի գոլորշում մըտած,
 Այնպէս չըռամեխ բռնել են իրար,
 Ինչպէս երկու մեծ, հսկայական սար,
 Որ գնան ու գան և դիպչեն միմեանց,
 Երկինքն է հասնում խրխինջը ձիանց:
 Խաթուռնը կանչեց «Աստուած, խնայես,
 Գու հայր ու որդուն իրարուց ջոկես»:

V



Իսկոյն երկուսն էլ ձիերից իջան

Եւ իրար հասան շանթերի նման.

Գէ՛մ ու յանդիման կանգնեցին հպարտ,

Դաշտում սկսուեց մի մեծ Գօտեմարտ.

Մէկ յանկարծ շողում, բերում քեամանդներ

Եւ հողին կպցնում հաստալիկ թիկունքներ.

Մէկ էլ յետ գալիս, իրար բաց թողնում,

Լայնարձակ դաշտում պոռոյաներ անում.

Մէկ էլ հե ի հե, տեղից հեռացած,

Վագում են բռնում նորից շարացած.

Իրար օձիքից դէս դէն քաշքշում
 եւ հնարներով իրար բօթբօթում...
 Յանկարծ Մհերը Դաւթին շալակեց
 եւ այնպէս ուժգին գետնովը զարկեց,
 Որ կէս մին խրուեց: Հանեց դանակը,
 Պիտի դուրս կտրէր վիզ—ծործորակը:
 Հաց եղաւ Դաւթ. «որ սպանումես,
 Կըտրճիս ձեռքից ինչպէս կաղատուես»:
 —«Քո կտրիճն ո՞վ է,—հարցրեց Մըհերը.
 —Իմ կտրիճն այն է, որ ծնած օրը
 Կտրանց շղթան մէջն օրօրոցին
 եւ ապարանջան ունի աջ թևին,
 Մհերը տեսաւ մի ապարանջան
 Աջ թևի վրայ կապած մի նըշան.
 —Տեսա՞ր, հօր դէմն ես զինվում, այ տղայ».
 —«Ներիր, իմացայ իմ հայրն ես, մեղայ».
 Ասաց Մհերը խոր զգացուելով,
 Ձեռքը համբուրեց՝ վզին փարուելով...
 Բայց հօր բերանից թնդաց արձագանդ
 —Որդի, դու լինիս անմահ, անժառանգ»...

VI

Երբ մեռան Դաւթի եւ կին խաթունը,
 Սև սուգ էր պատել ամբողջ Սասունը.
 Մի կողմից ներքին երկպառակութիւն,
 Կալուածքների մաս եւ բաժանութիւն.

Ամեն ցեղակից ոտի էր կանգնել,
 Իրաւունքի տէր ուզում էր լինել.
 Իսկ կառավարիչ Ձէնով-Յովհանը.
 Ծերութեան հասել, նստել էր տանը:
 Միւս կողմից հազար քաջ ու պահաւան
 Վրէժխնդրութեան լիրբ, ամբարտաւան
 Ապսպրանքներ են Սասուն ուղարկում,
 Հպատակութիւն, հարկեր պահանջում.
 Տեսնելով երկրի խառնակ զբրութիւն
 եւ ժողովրդի անչափ նեղութիւն,
 Մի անգամ Յովհան մեծ ժողով կազմեց
 Ազգականներից ու խորհրդակցեց...

VII

Մի արշաւախումբ մի օր առաւօտ
 Դընաց Կապուտկոյ Ամիրանի* մօտ.
 —«Մեր Դաւթին, հարսին զաւակ է եղել»,
 —Երանգ էք պատմում, —ասաց Ամիրան.
 —Ի՞նչպէս թէ երազ, մենք ունինք նշան.
 Կաթն ենք տեսել մեր հարսի ծծերում,**
 Զուր էք գաղտնիքը մեզանից թաղցնում»:

*) Դաւթի հանէրը, Խանդուղ-Խաթունի հայրը:
 **) Խանդուղը, երբ լսում է Դաւթի մահը, իրեն
 բերդի զլխից ցած է նետում ու նահատակվում:
 Այդ ժամանակ ձեռնահարում են ծծերը եւ պտուկ-
 ներին կաթ նկատում, նոր զլխի են ընկնում,
 որ Կապուտկոզում Դաւթին զաւակ է եղել:

— Այն, նրանից մի աղջիկ եղել,
 Բայց նա էլ շուտով ցաւից է մեռել».
 Պատասխանեցին միւսներն ստախօս,
 Բայց գետնի տակին փորել էին փոս
 Մի այրի նման, այնտեղ բանտարկել
 Եւ նրա վրայ պահապան կարգել:
 — Ժ՞նչ, կուզէք խարել երեխաներին,
 Նշաններ էլ կան մեր մեռելներին.
 Մեր կիսու չափ է մի տարեկանը,
 Յոյց տուէք, տեսնենք մեր գերեզմանը,

* * *

Գնացին տեռան բոլոր գերեզման,
 Իրենց նշանով ոչինչ չը գտան.
 Յովհանն ստաց. «տղերք, շուտ արէք,
 Գոմէի շորացրած կաշիներ բերէք,
 Ինձ փաթաթեցէք, գոռամ անխնայ
 Գուցէ մեր տրդան ձայնըս իմանայ»:

VIII

Վատարուեց պատուէր: Գուաց Յովհանը,
 Խորութեան միջից այն գետնատանը
 Մհերը լսեց, ձայնը ճանաչեց,
 Գուրս գալու համար ջանքեր գործ գրեց.
 — Չեր ազգի ձայնը չէ ազազակում,
 Երեխաներ են, թմբուկ են գարկում».
 Բայց պահապանին ահանջ չըդրաւ.
 Երբ երեք անգամ ձայնը հասկացաւ,

Կատաղի թափով այնպէս Մըհերը
 Քացի ճարուածեց բոլոր դռները,
 Որ դուռը դռան իրարով դիպաւ,
 Ե ո թ ն էլ կտորտեց ու նա գուրս ելաւ.
 Մօտեցաւ նրանց, հարցրեց Մհերը.
 — «Ինչո՞ւ էք եկել, ո՞ւր է իմ հայրը»:
 Յովհանը պատմեց, «անտէր է Սասուն,
 Գնու ես մնացել ժառանգ սիրասուն,
 Եկել ենք տաններ քեզ իբրև իշխան՝
 Թշնամիներին որ տաս պատասխան:
 Թէ չէ՝ ամեն մին իր ոյժն է փորձում,
 Դախս է զօռով մեր գլխին նստում,
 Մէկը ցոյց տալիս ծայրը անեղի,
 Միւսը պահանջում հարկեր անտեղի:
 Այսպէս ամեն օր ձրգձրգութիւններ.
 Չեն կարողանում մեր ցեղակիցներ
 Հետեւել նախնեաց քաջ օրինակին՝
 Յոյց տալ թշնամուն ուժ իր՝նց բազկին.
 Փրանց ինքն իրենց միսն են կրծոտում,
 Կայրը իրենց մէջ բաժնել աշխատում:
 Տանը առիւժ են, իսկ գուրսը կատու,
 Ուզում են լինեն ուրշի հարկատու.
 Չէ, կորաւ փառքը, անունը ազգի.
 Այս օրին հատնել չէի փափագի:
 Օրերն ու փեճակ թէ այսպէս անցնին՝
 Զուրը եկել է տարել Սասունին.
 Ուրիշը կըզայ կըխլէ մեր տեղ,
 Գերի կըմանը, կորչենք ցեղէցեղ...»

Ո՛րք Առիւծաձև Մհերք՝ քո պապ,
 Որ տեսնէ քաղցած մի առիւծ-վիշապ,
 Մանուկ հասակում գայ մենամարտի
 Եւ ձգած սովից խալիսին ազատի:
 Չրկայ և Դաւիթ, որ գոհուած կեանքին,
 Կնաց սպանեց Մսրամէլիքին.
 Կնքը Մսրա մէջ թագաւոր նըստեց,
 Չատ հակաների գլուխ կտրտեց...
 Բայց մի օր Խլաթցիք զօրք ժողովեցին,
 Ճամիկէն կտրելով պարիսպ կապեցին
 Անթիւ սայլերով շինեցին պատուար,
 Այնպէս որ չըկար անցնելու հնար:
 Քո հայր Դաւիթը չէր կռւում մենակ,
 Մայրդ Խանզուզն էլ շորում մարդանակ
 Մզրախի կոթով այնպէս էր դարկում,
 Որ սլանէ շները փլում, խորտակում,
 Սայլերն էլ ձգում վերտաւերով հեռու,
 Դաւիթն էլ զօրքին ջարդում ահարկն...
 Դաւիթը ասաց «էյ խլաթեցիներ,
 Ինչքան եղել էք դուք աննամուսներ,
 Որ մի հարսի գէմ կռիւ էք մղում.
 Թէ պատիւ ունիք, ինչու չէք թողում,
 Որ առաջ Սասուն տանեմ իմ հարսին,
 Յետոյ գամ կռուենք, կռիւ միասին»:
 Դուրս եկաւ և գէմ նրանց իշխանի*

*) Ժողովուրդը պատմումէ, որ այդ իշխանա-
 դուստր՝ Բանայ-Խանումը շատ չար, կռուարար
 պահլաւան է եղել: Երբ լսում է իր հօր արտի
 մշակներից, որ Դաւիթը Կապուտկոյ Խանզու-

(Սասունցիներ 49 էն, Գարեգի սարկաւարդի)
 Աղջիկը զայրոտ, որ կռիւ անի,
 «Դաւիթ, ասաց նա, դու ինձ մոռացար,
 Գնացիք դրան քիչ կնիկ առնը...
 Գէ, պատրաստ ելիր, մի գուրջ եմ դարկում:
 Դաւիթն ստիպուած տուաւ մի երգում,
 Թէ կռուի կըգայ: Եւ հաստատ խօսքին
 Սասունից եկաւ հեծաց Քուրբիկին.
 Կռիւն սկսեց, հեզը լծեցին,
 Չափրի տղմերամբ խրուից Դաւիթի ձին.
 Մի կերպ ազատուեց ցեխը մաքրելու
 Մի խոր ջրի մէջ գնաց լողալու.
 Բանայ—Խանումը՝ աղջիկէն իշխանի
 Կամօջի յետև թագնուած էր դադտնի.
 Դաւիթին սպանեց նետով թուսբեր.
 Այս է պատմութիւն, սիրելի Մհերք»:

գի մօտ գնալիս ճանապարհին հանդիպել է նրանց,
 մի շարթական հացի պաշարը մի փոք կրել է և
 մի շարթուայ գուլթանավարի գործը մի օրում
 վերջացրել, ուխտումէ թէ «Դաւիթն ինձ շառնի
 ուրիշի չեմ գնալ»: Այժմ, երբ տեսնում է Խան-
 դուզին կին առած, գիմումէ վրէժխնդրութեան,
 նետով սպանելով Դաւիթին: Իսկ ուրիշ վարիա-
 նտի մէջ ժողովուրդը բացատրում է, որ Խլաթ-
 ցիք Դաւիթի առաջը կտրում են իրենց անպատ-
 ութեան վրէժը լուծելու համար, որովհետև նա
 Կապուտկոյ գնալու ժամանակ սիրային յարաբե-
 րութիւն է ունեցել Խլաթցոց իշխանի այրի
 կնոջ հետ. «Սասունայ ծուռ(գիժ) Դաւիթն էդ-
 նիս, գաս մը աղի կնիկ սիրիս, մըր կռիւ կռիւս»
 ասումէին Խլաթցիք («Սասմայ ծուռ» 49 էջ,
 Դարեգին Սարգաւազի)



Մհերը հէնց որ հօր մահը լսեց,
 Երեսի վրայ գետինը փռուեց.
 Վրայ թափուեցին իր ազգականներ,
 Բայց չբկարացին բարձրացնել վեր.
 Ծոր արտասուքը հողը ողողեց.
 Երեք օրից յետ հազիւ նա ուղղուեց:
 Գնաց հօրական շորերը հագաւ.
 Ե արագը* կապեց, քուռակը հեծաւ,
 Վրէժն առնելու Խլաթ արշաւեց,
 Սրի տակ տուաւ, քարուքանդ արեց:
 Նա բարձրանում էր Նէրմու թի գլուխ**
 եւ երբ տեսնում էր երգկից էլի ծուխ,
 Միւս անգամ դառնում կայծակի թափով,
 Բընաջնջում էր ահ ու սարսափով.
 Ամենից վերջը մի պառաւ մնաց,
 Անգուսպ Մհերը նրան էլ չբխղձաց.
 «Թէև իմ հոգուն ես մեղք եմ անում,
 Բայց հօրըս մահուան վրէժն եմ հանում»:
 եւ կարեց իսպառ Խլաթայ ծուխը,
 Ինքն էլ հեռացաւ բլրի գլուխը...

*) Ձէնք ու գրահ.

**) Նէրմու թի գօտին պոնվում է Սիփանայ լեռ-
 նազաշտում: Բէլլին սպանելով մեր նահապետ
 Հայկը այդ սարի գլուխն է հանել:

Ձէնով-Յովհանը թոյլ կամքի մարդ էր.
 Անհաւատարիմ մի կնիկ ունէր,
 Կեանքը շռայլող, անունը Ս ա ո ա.
 — «Մհեր, եկ ինձ հետ գլուխ մէկ արա».
 Մի օր սկսեց Մհերին կանչել,
 Խորամանկ օձի լեզու բանացնել.
 Տուփանքից այնքան սաստկացել էր կիրք՝
 Ուզում էր խաբել և առնել իր գիրկ...
 Աչքը ձգել էր Մհերի վրան,
 Պատկերը շատ էր դուր գալիս նրան.
 Միշտ մըտածում էր թէ ինչպէս անի,
 Պատանուն անմեղ իր խելքից հանի:
 «Ջուր կըտաքցընեմ՝ գլուխս լուանամ,
 Ըորըս կըհանեմ՝ իսպառ մերկանամ.

Ահա ինչ է գրում Պ. Ս. Մանդինեանը իր
 «Իլլցագնական աշխարհում» (էջ 36) «Այդ տեղ
 հրաժեշտ տուաւ հօրեղբայրներից. նոքա դարձան
 իրենց տեղը, իսկ ինքը գնաց Տօսպայ բլուրը:
 Ասում են, որ մինչև այժմ էլ այն տեղ է, և մին-
 չև այժմ նրա ձին տեսնում են, որի վրայ
 նստած պատրաստ կայ, որ գայ և աշխարհքը
 շար լծից ազատէ»:

Առհասարակ մեր ժողովուրդը շատ տեսակ
 պատմութիւններ ունի Պատիկ Մհերի մասին:
 Վան ժողովրդի հայոց աւանդութիւնը շատ հրա-
 շալիքներ է պատմում, որոնցից մէկ ամենանշանա-
 ւորը առաջ ենք բերել այս գրքում, թէ ինչպէս
 փակվում է Մհերն իր ձիով «Ձմի-Ձմի» մագա-

Կրկանչեմ մօտըս՝ գլխին ջուր կածէ,
 Որ տեսնէ լէշըս և սէր մտածէ...»
 Այսպէս «միտքը ծուռ» ձեռով է անում
 Եւ Մհերի հետ մի գաղտնարանում
 Առանձնանում է յայտնելով կամքը՝
 Թածուկ սիրոյ մէջ որ կապէ կեանքը...
 Հրպատակվում է հերոս պատանին
 Այդ հրնարագ! տ կնոջ հրամանին.
 Ջուր է վեր առնում և գլխին ածում,
 Մի վիրաւորանք բայց սիրտն է կրծում,
 Երբ հասկանում է, լէշի մօտ կանգնած,
 «Ինչո՞ւ համար է այնպէս բացարած»...
 Դիպչել այդ լէշին նա մեղք է զգում.
 Եւ փշերի պէս աչքերն են ծակում
 Ե՛լ ընտանեկան պատիւն օջախի,
 Ե՛լ սրբութիւնը հայրական ծխի...
 Իր հսկայական զսպում է եսը,
 Եւ մրտատանջուած մեր քաջ հերոսը
 Չրզիտէ ինչպէս սոգատուի ցանցից,

ըայի մէջ, Ագրափա լեռան ստորերկրայքում:
 Փողովորդական վարիանտներին և մեր ուսում-
 նասիրութեան եզրակացութիւններին նայելով,
 այդ տեղ Մհերը, ինչպէս Պ. Ս. Մանդինեանն է
 ասում, ընդհակառակն, չէ բաժանվում իր հօրեղ-
 բայրներից, այլ գնում է նրանց հետ Սասուն,
 հագնում է հօր շորերը և արշաւում Խլաթ վրէժ
 առնելու համար: Այնտեղից նորից վերադառնում
 է Սասուն, ուր հալածվում է Չէմով-Յովհանից
 և Հալէբ գնում:

Որ չըբամբասուի և՛ մարդկերանցից:
 Ինքնասիրութեան վեհ զգացմունքներ
 Ընչում են կրքի զգայարանքներ.
 Եւ նա հնազանդ իր խղճի ձայնին
 Չուզեց զո՛հ գալ լէշի վաճառին.
 Երեսն է շրջում արհամարհանքով,
 Աչքերն է ծածկում գաղտնի մի ձեռքով,
 Միւսով ջուր ածում: Երբ յետ է նայում
 Եւ տեսնում Սառան, էլ չէ խնայում
 Մագերը փետել,
 Եախէն պատուտել,
 Էլ հարայ-հրոց,
 Աղմուկ, դղրդոց...

XI

Մարդը տուն գալիս
 Խաբար է տալիս,
 Յանդիմանում է Չէմով-Յովհանին.
 «Ի՛նչ ես տուն գցել այս անպիտանին.
 Չեոքը ձգեց ինձ, — հակառակուեցի,
 Ըսրըս պատուեց — մօտ չը թողեցի.
 Ի՛նչ եկաւ գլխիս՝ չըգայ թշնամուս, ի՛
 Բռնութեամբ ուզեց կտրել իմ նամուս»:
 Թէև փորձուած էր, գլխին ունէր խելք,
 Բայց նա փոխանակ մրտածելու ելք,
 Առանց ծանրախոհ հարց փորձ անելու,
 Պատճառ, հանգամանք առանց քննելու,
 Ըուտով կուլ գնաց լկտի, դաւաճան
 Ջրըպարտող կնոջ չարախօսութեան...
 Խեղճ Արևելցին շատ միամիտ է,

Այդ զէպքում կնոջ հաւստալ գիտէ.
 Նա չի անելու դատ ու դատաստան,
 Ինչո՞ւ զազտնիքը մարդիկ իմանան
 եւ ինքը դառնայ
 Ծագրի առարկայ.

Կնոջ վզին է պարտականութիւն,
 Տան, ընտանիքի պատիւ և անուն,
 Որպէս զի զբան չըպզծի ոչ ոք,
 Պէտք է տան մէջը փակել անողոք.
 Իոկ անպատուողին պատժելու համար
 Պէտք է աչքիցը կորցնել չարաչար...

XII

Ձէնով-Յովհաննը հաստատ իր վճռին՝
 Վռնդեց տանից անբաղդ Մհերին.

Երբ իրիկուն
 Եկաւ նա տուն,

Տեսաւ փակել են դուռը երեսին.

«Թքեմ այն ոչ խար մարդու նամուսին,

Որ գլխի տէրը կըլինի կնիկ.

Դիմակով ծածկուած, արարքով պոռնիկ.

Ո՛հ, խարուած ես դու անգգամ խօսքից.

Բայց գաղտնի սիրոյ փաղաքշանքից

Ես չըխարուեցի, կամքին հակառակ,

Օջախի պատիւ չարի ոտի տակ.

Ե՛լ, դուռը բաց՝

Մհեր գոռաց.


Յովհաննը դուռը էլ ինչ կըբանայ.
 «Կորի՛ր, անպիտան, իմ տանից դնա՛.
 Աչքիս չերևաս, գնա՛ Սասունից,
 Ձրկում եմ ես քեզ ժառանգութիւնից*»:
 — «Հաւատա՛, մտքիս ոչ մի վատութիւն
 Չէ անցնում երբէք: Բազկիս զօրութիւն՝
 Թէ մի քացի տամ՝ քեզ էլ, ամեն բան
 Կըտանի զէպի անդունդի բերան:
 Բայց թող համարուի այսքան բաւական,
 Որ ունիս մի կին լիրբ ու դաւաճան.
 Դա քո գլխին շատ փորձանք կըբերի,
 Բայց թող չըլինի ձեռքով Մհերի»:

XIII

Մհեր հալածուած, անտէր ու անտուն
 Ճանապարհ ընկաւ, թողնելով Սասուն.
 Հիմի ո՛ր գնայ, մենակ ինչ անէ,
 Տանից արտաքսուած, ո՞վ կըպաշտպանէ.

1001
1194

* Պ. Մանուկ Աբեղեանի Մոկայ բարբառով գրի առած վարիանտում Սառայի տուփանքի առարկան լինում է Դաւիթ: Բայց պ. Բ. Խալաթեան իր «Սասնայ փահլեաններ» գրքոյում հաւանօրէն նկատում և դուրս է բերում, որ «այդ սիրահարական զէպքը աւելի յարմարվում է Մհերին, որի տանից արտաքսուելու պատճառը մեզ լիովին սրբովում է»:
 Մենք գիտենք ժողովրդական վարիանտներից, որ Դաւիթը, որը մնալով, Սըսրից գալիս է Սասուն և որդեգրվում է Ձէնով-Յովհաննի մօտ: Տես նոյնը Սըտաչէս Աբեղեանի «Թլուատ Դաւիթ» ժողովրդական վէպում:



Խորթ է մարդկային հասարակութեան,
 Հասել է տխուր յուսահատութեան:
 Լիբբ բամբասանքի իբրև անմեղ գոհ,
 Թափառում է նա, վիճակից դժգոհ.
 Վերջը գընում է—մօտ ծընողներին՝
 Խորհուրդ հարցնելու գերեզմաններին.
 Որբի պէս ազի լաց է լինում նա.
 Խորհուրդ են տալիս, որ Հալէբ գնայ.
 Եւ նա գնում է.

Բայց պատահում է

Մի պառաւ կնիկ կէս ճանապարհին,
 Մածնոտ շերտ փը պինդ բռնած ձեռին.
 «Անձ կըսկիծըս անտանելի, թէժ
 Ստիպում է ինձ առնել իմ վրէժ.
 Գաւթի անօրէն սպասել է, անխ,
 Իմ եօթ որդկերանց, քանդել իմ օջախ.
 Լսել եմ մահը, գնում եմ ոտով,
 Մհերին զարկեմ մաժնի շերտ փոփ».
 Ասաց պառաւը խելքը կորցըրած:
 Մհերը իսկոյն դէսքը խոժոռած
 Բռնեց միտմիտ պառաւին բըղեց
 Ոտ ոտին զրեց, միջիցը ճըղեց....

XIV

Անցնում է ճամբան: Առաջն է գալիս
 Մի ուրիշ պառաւ, բարև չէ տալիս,
 Մի շատ այլանդակ ու հըրէշատես,
 Որի ծծերը շան ծծերի պէս,

Որ այնքան երկայն՝ գցել էր ուսով.
 Մհեր վախեցաւ և սուս ու փուսով
 Մտքումը զրեց մի գաղտնազողի
 Յարձակում գործել յանկարծ կատաղի.

«Գուցէ գայ բռնի

Ու ինձ սպանի»:

Եւ յանկարծակի վրայ է ընկնում,
 Անճոռնի ծծեր ձեռքերով բռնում,
 Քամում ու թափում արիւն ու շարաւ,
 — «Մի սպանիր ինձ, - աղաչեց պտուտ.
 Արևդ սիրես, թող իմ ծծերը,
 Եօթը տարի կայ, որ թագաւորը
 Հալէբ քաղաքի—կոխ է մըղում,
 Ինչքան գօրք ջարդում, — չէ կարողանում
 Մի կերպով հասնել իր նպատակին՝
 Գոհան Խաթունիս առնելու իր կին.

Թող ինձ, բարեկամ,

Նրան քեզ կբտամ»:

Մհերը համաձայն Հալէբ է գնում.
 Գոհար Խաթունի հետն ամուսնանում,
 Մի տէրտէրի մօտ դառնում է մշակ,
 Փող է աշխատում մի առ ժամանակ...

XV

Երբ այն պառաւ

Յանկարծ մեռաւ,

Թագաւորը դօշուէն կապում.
 Սազ Հալէբը շրջապատում:
 Երբ տեսնում է Մհեր նորից

Կայ պատերազմ թագաւորից,
Փողոցներում մեծ զլզլոց,
Վեր է առնում մի անթարոց*,

Կռիւ գնում
Եւ ինչ տեսնում

Սյն սեակնած դաշտում աղմուկ
Գունդ — գունդ գորքը զարկում թմբուկ...
Ճանապարհին մի ձիաւոր
Դէմն է գալիս, դէմքն անաւոր.

«Մհեր լինեմ՝ ձի շունենամ,
Նուսնց ձիու ոնց կռիւ տամ»:
Նա զարկում է և խլում ձին.
Գոհարին հետ հասնում կռուին.

Ինքն առջևից
Կինն յետևից

Աջ են խփում, ձախ դուրս գալիս,
Ձախ են խփում, աջ դուրս գալիս.

Սաղ դօշուենին հալածում են:
Լուրն ամեն տեղ տարածում են,
«Թէ ով դուրս գայ՝ քաջին յաղթի,
Կարժանանայ մեծ խալաթի»**...

Մարդիկ եկան, թագաւորին
«Ապրած կենաս»-գլուխ տուին,-
Սասմայ տեղը փահլեան կայ,
Ապսպրի՝ այնտեղից գայ»:

* Կրակ խառնելու փայտ.

** Ընծայարեբրական շնորհ, մեծ պարգև.

XVI

Միքանի մարդ Սասուն թռան.
«Լսիր, եղբայր Ձէնով-Յովհանն,
Թագաւորն է մեզ ուղարկել,
Բահրութեանդ ապսպրել՝
Մի պահլեան մեզ տաս, տանենք,
Որ այն քաջին մենք սպանենք.
Մարդ չէ յաղթում անիծածին,
Չեոք է դցել նըշանածին
Մեր արքայի սրտով սիրած,
Մեծ, անագին գորք կոտորած:
Կուզես, աղաք*
Եօթը քաղաք
Քեզ փէշքէշ տանք,
Փրկէ մեր կեանք»:

XVII

Ձէնով-Յովհաննը զիջաւ խնդիրքին,
Ղրկեց իր արդայ Գարոն-Աստղիկին.**
Չուտով հեծաւ ձին թեւաւոր,
Հագաւ Դաւթի զուքսը բոլոր՝
Թուր-կայծակին, կուռ-սաղաւարտ,

* Առաջ.

** Գարոն-Աստղիկի կռիւը Դաւթի հետն է Մ. Աբեղեանի մօտ, իսկ Բ. Խալաթեանի մօտ Մհերի հետ՝ մերի համաձայն: «Քանի որ, -գրում է պ. Խալաթեանը, -վերջինս մեզ անելի հասկանալի է և լաւ է յարմարվում «նազըլի» ներքին կապերի հետ»:

Թուա հալէբ գոռ մենամարտ.

Մհեր տեսաւ ու ճանաչեց.

Կռուիլ հետը շատ ամաչեց.

Գոհար հարցրեց. «ինչ ես տխուր,

երէկուան քէփ, այսօրուան ո՞ւր,

Այ՛ մարդ, ասա՛, ի՞նչ պատահեց,

Սիրտըդ այգպէս յանկարծ տխրեց»:

— «Ես չեմ երթալ մենամարտին».

— «Ամօթ քեզ պէս տըղամարդին՝

Այնքան զօրքին ջարդեր կըտայ,

Բայց մի մարդուց կըվախենայ.

Կուզես, երթամ ես մարդանակ,

Նրա գլխին թափեմ կըակ»:

— «Թէ կըլինես ինքնապաշտպան,

Պինդ կըզոցես դ՞ուռ, պատուհան,

Եւ դու տանը լուս կընստես,

Այն ժամ կերթամ կռուի հանդէս»...

— «Չատ լաւ» Գոհար յօժարուեցաւ.

Եւ երբ Մհեր ոտքը դրաւ

Գռան շէմքին,

Պիտի դէմքին

Իջնէր հարուած,

Բայց շուարուած

Նայեց տեսաւ՝ Պարոն-Աստղիկ

Չին թեւաւոր, հեծած սաստիկ,

Որոտում էր ձայնով անեղ.

Չեռքին բռնած նետ ու աղեղ,

Ուշքի եկաւ, խելքն հաւաքեց,

Պաշտպանութեան դիրք ստեղծեց,

Գլխին բռնած սաղաւարտին.

Թուր էր իջնում թուր-կայծակին.

Բիւր-բիւր կրակ օդն էր վառում,

Տուն փանջարէք* հիմքից շարժում...

XVIII

Ձայնի վրայ Գոհարն ելաւ,

Գուռը բացեց, ո՞հ, ի՞նչ տեսաւ.

Մի թեւաւոր ձիու վրայ

Հարուածում էր մի աժդահա

Իր Մհերին, որը միայն

Պաշտպանվում էր, չէր հանում ձայն.

Լեզին իսկոյն ընկաւ փորը

Եւ անիծեց իր սև օրը,

Երբ տեսնում էր սաղաւարտին

Թուրն էր իջնում, շարժում դետին.

Պինդ ծղրտաց. «է՛յ, փահլեան,

Հիմի ես եմ քո յանդիման.

Թո՛ղ Մհերին, ինձ հետ կռուիր,

Կամ կեանք կամ մահ շուտ ընդունիր»...

Վ իրաւորուեց ասպետ Մհեր,

Երբ Գոհարի լսեց խօսքեր,

Յանդիմանեց. «Ինչո՞ւ եկար.

Մեր մէջն ընկար»:

Գժուած, փրփրած մեր արի հսկան

Աչքն արիւն կոխած, մոռցած ամեն բան,

* Լուսամուտներ.

Ջարկն այնպէս հասցրեց՝ ծակուեց ձիու փոր
Ընկաւ Աստղիկը թաւալազըլոր.

Պառկած ձիու տակ, շողախուած արնում,
Վերջին հառաչով գետնին թրպրտում:

«Այս զարբն է, գիտեմ, Պստիկ Մհերի,

Ոչ որ չէր կարող ինձ փորձանք բերի»:

Գոհարն այժմ նոր հասկացաւ

Մի տխրութիւն ինչո՞ւ անցաւ

Իր մարդու մէջ, ոչ թէ վախից,

Այլ ազգական սիրոյ խաթրից...

* * *

Մհերն արքայի գլուխը կտրեց

Եւ քսան տարի թագաւոր նստեց

Հայէր քաղաքում: Քառասուն տարի

Անցնելուց յետոյ սիրուն Գոհարի

Արևը մարեց.

Մհերը տխրեց,

Տուաւ իրեն որսորդութեան.

Մի կողմից էլ հօր ուրուական

Ծանրութեան տակ անէ ծքի,

Դառնութիւնով լի կեանքի,

Հալածում է զէպի սարեր,

Դէպի վայրի թափառումներ...

* * *

Մի օր ելաւ,

Իր ձին հեծաւ,

Գնաց որսատեղ

Չեռքին նեա, ազեղ.

Որսորդները բռնեցին,

Մի հորի մէջ ձրգեցին...

XIX

Մի պառաւ կնիկ երբ իմանում է

Այդ զէպի մասին, իսկոյն տանում է

Իր աղջիկը նոյն հորի մէջ գցում

Եւ տեսէք անձ ինչ է մտածում.

«Աղջրկանքս մօտ Մհեր կըքնի

Եւ մի պահ լեան* շնորհքով կըծնի.

Նրա սագաղից մենք հաց կըճարենք,

Աշխարհում անուն, փառք կըվայելենք»:

Բայց Մհեր հորում այդ աղջրկանը

Բռնում, սպանում: Մէջքի պարանը

Իր մէջքն է կապում,

Պառաւին կանչում.

«Մարէ, դուրս քաշիր»: Եւ նա քաշում է

Ուրախութիւնով. այն պէս զգում է,

Թէ ծանրացել է աղջիկն արգանդով...

Բայց դուրս եկողն էր Մհեր եռանդով,

Մեծ ճարպիկութեամբ այն հորի ափին.

Ինչ խօսք պառաւի զարմանք-սարսափին...

Երբ աղջրկայ տեղ Մհերին տեսաւ՝

* Փահլեան (պահլաւան) ժողովուրդը ասում է գերբնական անսովոր ոյժ ունեցողին, իսկ քաջին կտրիճ, փերըզ.

Ներս գըլորելու ջանքեր ցոյց տուաւ.
Բայց Մհերը պինդ ոտիցըն այնպէս
Ձգեց, ճուտեց, արեց երկու կէս:

* * *

Այնտեղից մի ձի հեծած Մհերը,
Երբ սկսեց հին արշաւանքները
Իր որսորդական
Ու թափառական,

Յանկարծ կորչում է, խաւար ընդունւմ,
Ագրափա լեռան ստորոտներում *...

XX

Երբ Վանայ բերդից մտիկ ենք անում,
Մի լեռնագօտի կայ հեռաստանում.
Քիթն արևելեան— Ջըմփ-Ջըմփ մաղարան,
Ծայրն արևմտեան— սարը Ագրափան.
Եւ կենդրոնի մէջ Մհերի դուռը,
Դիմացն են Վանայ այգեստանները:
Ջըմփ-Ջըմփ քարայր է մի մեծ, ընդարձակ,

* «Հայաստանի սարերում, ասում է պ. Լէօն իր «Դաւիթ և Մհեր» գեղեցիկ քննադատութեան մէջ, երկու այդպիսի բանտարկուածներ կան— Արտաւազը Մասիսի վիհում, Մհերը Վանայ այրում: Երկուսը մի ճակատագրի տէր, երկուսն էլ հարական անէծքի սարսափելի ծանրութեան տակ»: Թէ այդ քննադատութեան և թէ ժողովրդական վարիանտների մասին ես կըտամ առանձին գրքով:

Որ մէջը իսկոյն ձայնած ժամանակ
Ջըմփ-Ջըմփ անազին տալիս արձագանք,
Ներկայ եղողին բերում զարհուրանք:
Ասում են, այդ մութ ուղին լեռնափոր
ձանապարհներով ոլոր ու մոլոր
Տանում է մինչև Գայլ գետի ափեր,
Չուրջը տարածուած արմաւենիներ.
Ներսը, խորքի մէջ, մթին անկիւնում
Կայ մի ճանապարհ, քամի է փչում.
Ստորերկրայրում այն վիթխար լեռան
Ջրերն են աղմկում փոթորկի նման...
Բերդածէ զագաթ ունի մտղարան,
Կարծես հնութեան լինի թանգարան.
Քանի փորել են, պեղում կատարել,
Այնքան հրաշալի բաներ են գտել:
Էլ չէնքեր ասես, լայն սանդուխտներով,
Կոփածոյ քարից բազմածներով
Եւ մէջը կժեր, հողէ կարասներ,
Երկաթէ նետեր, պղնձէ արձաններ...
Մերկ սալաքար է Մհերի դուռն էլ,
Որ մեծ արհեստով տաշել են, կոկել,
Սիւրուն քառանկիւն մի շրջանակով,
Մեծ դռան նման, տախտակի ձևով,
Վրէն փորագրած նշանագծեր,
Դեռ պարզ ու յստակ բեւեռագրեր.
Որոնք պատմում են դեռ ամենահին
Անցքերը՝ եկած ժողովրդի գլխին:
Դռան չորս կողմը շինուած է երկաթ,
Որի վերեւից ծորում է կաթ-կաթ

Սև ջրի հեղուկ.

Ասում են ծածուկ

Ասածոյ հրամանով Մհերն ու իր ձին
Փակուել են յանկարծ այն տեղ միասին:

XXI

Այն սև հեղուկը ձիու քրտինքն է
Ու դռան ներսը ճախրի-Ֆալակն է, *
Հուրջն է թաւովում բաղդը պտոյտի,
Առանցրի նման մեր երկրագնտի.

Ամեն մի թևքին բաղդը իր ձեռքով
Փորագրել է կեանքի գաղտնիքով
Մի շարք գրութիւն հմայական ու թեամբ
Եւ խորհրդաւոր բովանդակութեամբ:

Մէկը ցոյց տալիս թէ ինչպէս լինում
Ամեն մի մետաղ ոսկի է դառնում.

Միւսը ցոյց տալիս լեռ ու հանրերի,
Թագնուած տեղերը անդամանդների.

Որն ուսուցանում մէջն բժշկութեան
Գտնել կաթիլը վեր անմահութեան.

Որն էլ տալիս է փարք իշխանութիւն,
Տիրապետելու ոյժ ու զօրութիւն...

Սյապէս ամեն մի թևքին անիւրի

Արձանագրուած է մարդկային բաղդի

Մի-մի հմայակ և այն հընարը,

Որին չէ հասել մարդուս հանճարը...

* Ժողովրդական լեզուով շախրի-Ֆալակ.

XXII

Մհերը կան գնած, բաղդին հպատակ,
Նրա վրայ է նայում շարունակ.
Երբ պտտելուց ճախրը դադարի,
Այն օրը ձիով Մհեր քաջարի

Դուրս կը գայ նորից

Այդ խաւար այրից,

Աշխարհ կը փրկի

Չարութեան լծից...

XXIII

Ասում են նոյնպէս, որ ամեն տարի
Համբարձման գիշեր դուռը Մըհերի
ձր՛ւ-ձր՛ւ բացվում է և այդ բոպէին
Իրար են փարվում երկինք ու գետին.

Սակայն դուրս գալու չըկայ հրաման,
Գետինը զօրից * չի վերցնի նրան.

Հէնց այդ վայրկեանին մարդիկ սպասում
Եւ երբ յաջողվում ճախրին են հասնում,

Պէտք է ունենան ձեռքերում բռնած

Բարակ թերթիկներ՝ մոմերից շինած,

Որ ճախրի յանկարծ կանգնած բոպէին
Պատրաստ՝ կպցնեն նրա թևքերին:

Հմայական երից մէկը զրոշմվում է,

Մոմին անցնելով հրաշագործվում է,

* Այդպէս զօրով էր և Պարսից Ռոստոմ-Չալը, որ Մհերի նման ման գալիս ոտքերը խրվում էին գետնի մէջ:

Այն է ստանում շնորհից մարդը,
 Որն որ նրան է վիճակում բաղդը:
 Բայց մարդիկ, աւանդ, այդ շնորհներին
 Ձեն արժանանում: Հէնց այն վայրկեանին,
 Երբ ճախը պտոյտից դադար է առնում
 Եւ հէնց որ մարդիկ նրան են հասնում,

Յանկարծ թմրութիւն,
 Քնն, անշարժութիւն
 Նրանց ընդգրկում,
 Աչքերը փակում...

Ասում են, շատն էլ ազան լինելով
 Ոսկի ու արծաթ վերցնելու յուսով
 Մտել են ներսը և շատ ուշացել,
 Գուռը փակուել է, ներս են մնացել...

XXIV

Պատմում են, մի օր Համբարձման գիշեր՝
 Քունը փախցրած նախրապան մի ծեր
 Տեսնում է յանկարծ բացվում է դուռը,
 Առանց երկիւզի մտնում է ներսը.

Հարցնում է Մհեր
 «Ծերուկ անվեհեր,

Աշխարհ էք տիրում դուք ինչ հնարքով».
 Պատասխանում է «խելքով, օրէնքով».
 — «Հէյ, հէյ, -ասում է Մըներ գարմացած,
 Երանի էք մեր դովրանն անցած,
 Մեր ժամանակին ոյժն էք բան տեսնում,
 Երկրի բարութիւն ոյժն էք վայելում»...
 Ծերուկը հարցրեց «Երբ պէտք է դուրս գաս,


ձնշուած աշխարհին կենդանութիւն տաս»:
 Մըները ասաց-«Երբ չափ սալորի
 Գառնայ ցորենը-գարին մտուրի՝
 Երբ ուժիս չափին ամեն բան հասնի,
 Եւ երբ պտոյտից ճախըրը դադարի,
 Այն ժամանակ կայ միայն հրաման,
 Որ այս վիճակից լոյս աշխարհ դուրս գամ.
 Եւ եթէ եկայ, աշխարհ կըփրկեմ,
 Աշխարհ կըփրկեմ, չարեր խորտակեմ,
 Կըքանդեմ բոլոր բաժան ոյժերը,
 Մէնակ կըլինեմ աշխարհի տէրը....

* * *

Ժողովրդական ականգութիւնը
 Տալիս է ազգին այս պատմութիւնը,
 Որ մինչև այժմ բաժանուած է նա
 Մեզնից մի դռնով ու դուրս պիտի գայ:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



ՀՀ Ազգային գրադարան



NL0321830

23169

